

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի ապրիլի 20-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախաավարտական, արտադրական և ուսումնական պրակտիկաների ընթացքը:
2. 2016 թվականի ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

**Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախաավարտական, արտադրական և ուսումնական պրակտիկաների ընթացքի մասին /զեկուցող Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ ավարտական կուրսերում ուսումնական պլաններով սահմանված նախաավարտական, արտադրական և ուսումնական պրակտիկաներին ուսանողները ցուցաբերում են ակտիվություն և այն ավարտվելու է ապրիլի 23-ին: Պրակտիկայի ավարտվելուց հետո ուսանողները համապատասխան փաստաթղթերով՝ ըստ հաստատված ժամանակացույցի, պետք է ներկայանան համալսարան պրակտիկայի պաշտպանության նպատակով: Անդրադառնալով օրակարգի երկրորդ կետին, նշվեց, որ ամփոփիչ ատեստավորման քննություններին նախապատրաստվելու նպատակով կազմակերպվել են խորհրդատվություններ՝ ավարտական քննական համապատասխան առարկաներից, ինչպես նաև, ըստ ամփոփիչ ատեստավորման նախապատրաստման նպատակով տրամադրված շրջաբերականի, հաստատվել են հանձնաժողովների կազմերը, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցը:

**Արտահայտվեցին** – Ա. Ե. Համբարձումյանը, Ա. Ա. Ոսկանյանը

Նշվեց, որ դեկանատը նախապատրաստել է համապատասխան փաստաթղթերը՝ նախաավարտական, արտադրական և ուսումնական պրակտիկաներից վերադարձող ուսանողների պրակտիկայի պաշտպանությունը, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքը կազմակերպելու նպատակով:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Ա. Ա. Ոսկանյան